ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Նախագիծ

Կ-432-23.01.2014,21.02.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ քննչական կոմիտե) ծառայության անցնելու կարգը, պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և ծառայության հետ կապված մյուս հարաբերությունները:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

1. **Քննչական կոմիտեում ծառայությունը՝** պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:
2. **Քննչական կոմիտեի ծառայողը՝** քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների պետերը և նրանց տեղակալները, բաժնի պետերը, բաժնի պետի տեղակալները, բաժանմունքի պետերը, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները և քննիչները:

Հոդված 3. Քննչական կոմիտեում դիմումների (հաղորդումների), միջնորդությունների և բողոքների քննարկումը

1. Քննչական կոմիտեում քրեական վարույթին առնչվող դիմումները (հաղորդումները), բողոքները և միջնորդությունները քննարկվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 4. Քննչական կոմիտեի գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները

1. Քննչական կոմիտեում վարվում է վիճակագրություն՝ քննչական կոմիտեի գործունեության վերաբերյալ, որի հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ կազմվում են վիճակագրական հաշվետվություններ:
2. Վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. Քննչական կոմիտեի ներակայացուցչի մասնակցությունը գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին

1. Քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, իսկ նրանց հանձնարարությամբ՝ քննչական կոմիտեի այլ ծառայողները գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հանցավորության հարցերին վերաբերող նիստերին կարող են մասնակցել այդ մարմինների իրավերի հիման վրա:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 6. Քննչական կոմիտեի լիազորությունները

1. Քննչական կոմիտեի լիազորությունն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը:

Հոդված 7. Քննչական կոմիտեի ինքնուրույնությունը, նրա ծառայողների գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը

1. Քննչական կոմիտեի ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն օրենքին:
2. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների իրականացմանը միջամտելն արգելվում է:

Հոդված 8. Քննչական կոմիտեի գործունեության հրապարակայնությունը

1. Քննչական կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և ծառայողական, կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը:
2. Քննչական կոմիտեն յուրաքանչյուր տարի հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին:

3. Քննչական կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ քննչական կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին:

Հոդված 9. Քննչական կոմիտեի ծառայողի պահանջների կատարման պարտադիրությունը

1. Քննչական կոմիտեի ծառայողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լիազորություններից բխող պահանջները ենթակա են կատարման:
2. Հանրային ծառայողի կողմից քննչական կոմիտեի ծառայողի լիազորություններից բխող պահանջները չկատարելու դեպքում քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալը տվյալ ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է նման լիազորություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին:

Հոդված 10. Քննչական կոմիտեում ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումները:
2. Քննչական կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քննչական կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

ԳԼՈՒԽ 3.
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 11. Քննչական կոմիտեի համակարգը

1. Քննչական կոմիտեի համակարգը ներառում է քննչական կոմիտեի կենտրոնական մարմինը, զինվորական քննչական գլխավոր վարչությունը, Երեւան քաղաքի քննչական վարչությունը, մարզային քննչական վարչությունները, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտը:
2. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներն են՝ կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունները, այդ թվում՝ զինվորական քննչական գլխավոր վարչությունը, վարչությունները եւ բաժինները, զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են՝ գլխավոր վարչության վարչությունները, բաժինները (բաժանմունքները) և կայազորային քննչական բաժինները (բաժանմունքները), Երեւան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են՝ Երեւան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինները, մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են՝ մարզային քննչական վարչությունների տարածքային բաժինները (բաժանմունքները):

3. Զինվորական քննչական գլխավոր վարչության պետն ի պաշտոնե քննչական կոմիտեի նախագահի տեղակալն է (այսուհետ՝ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ):
4. Քննչական կոմիտեի լիազորությունների լիարժեք եւ արդյունավետ իրականացումը եւ քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը ապահովում է քննչական կոմիտեի դեպարտամենտը:
5. Քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության առանձնահատկությունները սահմանվում են «Քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
6. Քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը ինչպես նաև քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Քննչական կոմիտեի նախագահը

1. Քննչական կոմիտեի նախագահը ղեկավարում և վերահսկում է քննչական կոմիտեի գործունեությունը և պատասխանատու է քննչական կոմիտեի լիազորությունների իրականացման համար:
2. Քննչական կոմիտեի նախագահը՝
1) սահմանում է քննչական կոմիտեի ծառայողների կողմից նախաքննության արդյունավետության, այդ թվում՝ դրա պատշաճ կազմակերպման ուղեցույցները և ապահովում դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը.
2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև.
3) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, հանձնարարականներ).
4) ներկայացնում է քննչական կոմիտեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ հարաբերություններում.
5) հաստատում է քննչական կոմիտեի կանոնադրությունը.
6) իր իրավասության սահմաններում խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում քննչական կոմիտեի ծառայողներին.
7) քննչական կոմիտեի խնդիրների իրականացման, քննչական կոմիտեի ծառայողների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ սահմանելով դրանց գործունեության կարգը:
8) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 13. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը

1. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը՝
1) համակարգում է քննչական կոմիտեի նախագահի կողմից իրեն հանձնարարված ոլորտի աշխատանքները.
2) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին իրավական ակտեր.
3) միջնորդություններ է ներկայացնում քննչական կոմիտեի ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

4) քննչական կոմիտեի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով փոխարինում է քննչական կոմիտեի նախագահին: Նման հրամանի բացակայության դեպքում քննչական կոմիտեի նախագահին ժամանակավորապես փոխարինում է քննչական կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը:

Հոդված 14. Ծառայողական և քրեադատավարական վերադասությունը

1. Քննչական կոմիտեի նախագահը վերադաս է քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար:

2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը վերադաս է իր համակարգման ներքո գտնվող քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար:

3. Քննչական կոմիտեի ստորաբաժանման պետը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր ծառայողների համար

4. Քննչական կոմիտեում ծառայողական վերադասության մյուս հարաբերությունները կարգավորվում են քննչական կոմիտեի կանոնակարգով:

5. Քննչական կոմիտեում քրեադատավարական վերադասության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

Հոդված 15. Քննչական կոմիտեի կարգապահական և որակավորման հանձնաժողովները

1. Քննչական կոմիտեում գործում են կարգապահական և որակավորման հանձնաժողովներ:
2. Կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից: Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, քննչական կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող, Հայաստանի Հանրապետության Նախագահի և ՀՀ վարչապետի կողմից համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից և ՀՀ կառավարության աշխատակազմից նշանակված երկուական ներկայացուցիչ: Կարգապահական հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով և չեն կարող միաժամանակ լինել որակավորման հանձնաժողովի անդամներ: Կարգապահական հանձնաժողովում նոր անդամների նշանակումները սույն հոդվածի սույն մասով սահմանված կարգով կատարվում են կարգապահական հանձնաժողովի գործող անդամների լիազորությունների դադարելու օրվան նախորդող օրը:
3. Կարգապահապական հանձնաժողովը ղեկավարում է դրա անդամների ձայների մեծամասնությամբ ընտրված անդամներից մեկը:

4. Կարգապահական հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:
5. Որակավորման հանձնաժողովը կազմված է 9 անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, քննչական կոմիտեի 4 ծառայողներ, 4 իրավաբան-գիտնական: .
6. Որակավորման հանձնաժողովի անդամներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ 3 տարի ժամանակով: Որակավորման հանձնաժողովի նոր անդամներին քննչական կոմիտեի նախագահը նշանակում է որակավորման հանձնաժողովի գործող անդամների լիազորությունների դադարեցման օրը:
7. Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է քննչական կոմիտեի նախագահի տեղակալը:

ԳԼՈՒԽ 4
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ, ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 16. Քննչական կոմիտեում ծառայության պաշտոնները

1.Քննչական կոմիտեի ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝
1) բարձրագույն պաշտոններ
2) գլխավոր պաշտոններ
3) առաջատար պաշտոններ
4) կրտսեր պաշտոններ:
2. Քննչական կոմիտեում ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խումբ դասակարգվում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթախմբերի:
3. Քննչական կոմիտեում ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:
4. Քննչական կոմիտեում ծառայության բարձրագույն խմբի պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի, որում ընդգրկված են հետևյալ պաշտոնները՝
1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի նախագահ,
2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ:
5. Քննչական կոմիտեի ծառայության գլխավոր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի, որում ընդգրկված են հետևյալ պաշտոնները՝
1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետ, կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ, մարզային վարչության պետ,

2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետ, կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության բաժնի պետ, Երևան քաղաքի վարչական շրջանի բաժնի պետ, մարզային վարչության պետի տեղակալ, գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ,

3) 3-րդ ենթախում՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության բաժնի պետի տեղակալ, Երևան քաղաքի վարչական շրջանի բաժնի պետի տեղակալ, մարզային վարչության քննչական բաժնի (բաժանմունքի) պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, կայազորային քննչական բաժանմունքի պետ, գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

6. Քննչական կոմիտեում ծառայության առաջատար պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի, որում ընդգրկված են հետևյալ պաշտոնները՝

1) 1-ին ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության բաժնի ավագ քննիչ,

2) 2-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության ավագ քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության բաժնի քննիչ, կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ, մարզային վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային վարչության բաժնի պետի տեղակալ, կայազորային քննչական բաժնի (բաժանմունքի) պետի տեղակալ,

3) 3-րդ ենթախումբ՝ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության քննիչ, զինվորական քննչական վարչության բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի բաժնի ավագ քննիչ, մարզային վարչության ավագ քննիչ:

7. Քննչական կոմիտեի ծառայության կրտսեր պաշտոնը դասակարգվում է հետևյալ ենթախմբերի, որում ընդգրկված են հետևյալ պաշտոնները՝

1) 1-ին ենթախումբ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի (բաժանմունքի) քննիչ,Երևան քաղաքի վարչական շրջանի բաժնի քննիչ, մարզային վարչության քննիչ,

2) 2–րդ ենթախումբ՝ մարզային վարչության բաժնի ավագ քննիչ:

3) 3-րդ ենթախումբ՝ մարզային վարչության բաժնի քննիչ:

Հոդված 17. Քննչական կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Քննչական կոմիտեում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է հայերենին.

3) չունի քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ այդ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

3. Քննչական կոմիտեում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

1) ով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

4) ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

5) ում նկատմամբ առկա է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

6) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

4. Քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է 60 տարեկանը: Սահմանային տարիքը լրանալուց հետո քննչական կոմիտեի նախագահը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել ծառայության ժամկետը:

5. Քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալի պաշտոնի սահմանային տարիքը 65 տարեկանն է:

Հոդված 18. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը

1. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրվում է քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից՝ տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին:

2. Քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների լրացուցիչ որակավորման ստուգում:

3. Որակավորման հանձնաժողովը քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետ կայքում (www.azdarar.am) և քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետ կայքում հրապարակում է հայտարարություն՝ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները, վայրը, որակավորման գրավոր քննության օրը, համալրման ենթակա տեղերի քանակը:

3. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պետք է ներկայացնի՝

1) անձը հաստատող փաստաթուղթ.

2) իր բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթուղթ.

3) իր կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի մասնագիտություն ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները).

4) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է).

5) քննչական կոմիտեում ծառայությանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տրված փաստաթուղթ:

4. Հայտատուն իրավունք ունի ներկայացնելու նաև երաշխավորագիր-նամակներ:

5. Հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, և դրանք ենթակա են վերադարձման որակավորման հանձնաժողովի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Որակավորման հանձնաժողովը ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները, ինչպես նաև նրա կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված այլ պահանջներին:

7. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն ընդգրկվում են քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում:

8. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիր են անցնում և հանձնում որակավորման քննություն: Որակավորման քննություն չհանձնած անձը հանվում է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակից՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

9. Անձն ազատվում է ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց, եթե՝

1) ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի կամ
2) իրավաբանական գիտությունների դոկտոր է կամ
3) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:
10. Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ որակավորման հանձնաժողովը կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը:
11. Որակավորման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան՝ որոշումը ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում: Դատարանը գործը քննում և լուծում է այն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում:
Որակավորման հանձնաժողովի կողմից հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելը չի կասեցնում հայտերի ընդունման և քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի կազմման՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգը: Որակավորման հանձնաժողովի՝ հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հայտատուի հայտը ենթակա է քննարկման որակավորման հանձնաժողովի կողմից:

Հոդված 19. Քննչական կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակը

1. Քննչական կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակը ձևավորվում է որակավորման հանձնաժողովի կողմից՝
1) քննչական կոմիտեի ծառայողների հերթական ատեստացիայի ժամանակ.
2) արտահերթ կարգով, երբ քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալն առաջարկություն են ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ծառայողական բնութագիր: Քննչական կոմիտեի ծառայողն ընդգրկվում է ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.
3) այն դեպքերում, երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ:

Հոդված 20. Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ պաշտոնավարման սահմանային տարիքը լրանալը:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում:
3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից:
4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:
5. Հայաստանի Հանրապետության Նախագահը քննչական կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:
6. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների,վարչությունների և բաժինների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, բաժինների (բաժանմունքների) և կայազորային քննչական բաժինների (բաժանմունքների), Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների, մարզային քննչական վարչությունների բաժինների (բաժանմունքների) կազմում գործող քննչիներին պաշտոնի է նշանակում քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք, ավարտելով ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ սույն օրենքով ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակից:
7. Քննչական կոմիտեի մյուս ծառայողներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակից:
8. Քննչական կոմիտեի նախագահը սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշված քննչական կոմիտեի ծառայողներին պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

Հոդված 21. Քննչական կոմիտեի ծառայողի երդումը

1. Քննչական կոմիտեում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձինք քննչական կոմիտեի նախագահի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության դրոշի առջև տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.
«Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում պաշտոն ստանձնելով, երդվում եմ՝
հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հանցավոր ոտնձգություններից պաշտպանել սահմանադրական կարգը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հասարակական կարգն ու անվտանգությունը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները»:

2. Քննչական կոմիտեի ծառայողը երդում տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:
3. Քննչական կոմիտեի ծառայողն ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

Հոդված 22. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների դադարումը

1. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները դադարում են՝
1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման.
2) իր գրավոր դիմումի հիման վրա.
3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարացվել.
4) հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեի ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.
5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.
6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը:
2. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները դադարեցվում են՝
1) նրա նկատմամբ լիազորությունների դադարեցման ձևով կարգապահական տույժ նշանակելու դեպքում.
2) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.
3) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.
4) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.
5) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում.
6) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.
7) նրա կողմից սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում:

Հոդված 23. Քննչական կոմիտեի ծառայողների կոչումները

1. Քննչական կոմիտեի ծառայողների համար սահմանվում են հետևյալ կոչումները.
1) արդարադատության գեներալ-լեյտենանտ.
2) արդարադատության գեներալ-մայոր.
3) արդարադատության գնդապետ.
4) արդարադատության փոխգնդապետ.
5) արդարադատության մայոր.
6) արդարադատության կապիտան.

7) արդարադատության ավագ լեյտենանտ.
8) արդարադատության լեյտենանտ:

2. Արդարադատության գեներալ-լեյտենանտի, արդարադատության գեներալ-մայորի կոչումները բարձրագույն կոչումներ են, որոնք շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

3. Քննչական կոմիտեի ծառայողների մյուս կոչումները շնորհում է քննչական կոմիտեի նախագահը:

4. Քննչական կոմիտեի ծառայողներին կոչումները շնորհվում են հերթականության կարգով՝ նախորդ կոչումում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Քննչական կոմիտեի ծառայողների կոչումները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

6. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով լիազորությունները դադարելու (դադարեցվելու) դեպքում քննչական կոմիտեի ծառայողը կարող է զրկվել քննչական կոմիտեում ծառայության կոչումից՝ տվյալ կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:

Հոդված 24. Քննչական կոմիտեի ծառայողների պաշտոններին համապատասխանող կոչումները

1. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-լեյտենանտի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումը:

2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության գնդապետի կոչումը:

3. Բարձրագույն պաշտոնի երրորդ ենթախմբի և գլխավոր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է:

4. Գլխավոր պաշտոնի երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության մայորի կոչումն է:

5. Գլխավոր պաշտոնի երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության կապիտանի կոչումն է:

6. Առաջատար պաշտոնի առաջին և երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության կապիտանի կոչումն է:

7. Առաջատար պաշտոնի երրորդ ենթախմբի և կրտսեր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության ավագ լեյտենանտի կոչումն է:

8. Կրտսեր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության լեյտենանտի կոչումն է:
9. Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելիս, նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվում է քննչական կոմիտեի ծառայողի կոչմանը:
10. Զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 25. Քննչական կոմիտեի ծառայողների կոչումների շնորհման ժամկետները

1. Արդարադատության լեյտենանտի կոչումն սկզբնական կոչում է և շնորհվում է քննչական կոմիտեում պաշտոնի նշանակվելիս:
2. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումի շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.
1) արդարադատության լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 2 տարի.
2) արդարադատության ավագ լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 3 տարի.
3) արդարադատության կապիտանի կոչում ունեցողի համար՝ 3 տարի.
4) արդարադատության մայորի կոչում ունեցողի համար՝ 4 տարի.
5) արդարադատության փոխգնդապետի կոչում ունեցողի համար՝ 5 տարի:
3. արդարադատության գնդապետի կոչում ունեցող ծառայողին բարձրագույն կոչում շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում:
4. Նախորդ կոչումը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ կոչումը շնորհելու մասին իրավական ակտը ստորագրելու հաջորդ օրվանից:
5. Ատեստավորումը սույն օրենքով սահմանված կարգով հետաձգվելու և վերապատրաստման գործուղվելու, կարգապահական տույժ ունենալու, քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցնելու կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցված լինելու դեպքերում հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է մինչև նշված խոչընդոտների վերանալը:

ԳԼՈՒԽ 5
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26. Քննչական կոմիտեի ծառայողի ծառայողական իրավունքները

1. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի՝
1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերին և ներկայացնելու պարզաբանումներ.

2) սահմանված կարգով ստանալու ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.
3) ստանալու օրենքով նախատեսված վարձատրություն, հավելավճարներ և այլ վճարներ.
4) սահմանված կարգով մասնակցելու ծառայողական առաջխաղացմանը և ստանալու իր պաշտոնին համապատասխանող ավելի բարձր կոչում.
5) սահմանված կարգով վերապատրաստվելու պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.
6) ներկայացնելու առաջարկություններ քննչական կոմիտեի գործունեության կատարելագործման վերաբերյալ:

Հոդված 27. Քննչական կոմիտեի ծառայողի ծառայողական պարտականությունները

1. Քննչական կոմիտեի ծառայողը պարտավոր է՝
1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.
2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.
4) իր գործունեության ժամանակ պահպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը.
5) պահպանել ծառայողական կարգապահությունը.
6) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելուն սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո:
2. Քննչական կոմիտեի ծառայողն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:

Հոդված 28. Քննչական կոմիտեի ծառայողի խրախուսման միջոցները

1. Ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու, աշխատանքային հաջողությունների և այլ վաստակի համար քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.
1) շնորհակալություն.
2) միանվագ դրամական պարգև կամ հուշանվերով պարգևատրում.
3) լրացուցիչ վճարովի 10-օրյա արձակուրդի տրամադրում.
4) արտահերթ կոչում շնորհելը.
5) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված կոչումի վերին սահմանից մեկ աստիճանով ավելի բարձր կոչում շնորհելը.
6) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրումը:
2. Քննչական կոմիտեի ծառայողի խրախուսման համար կարող է կիրառվել նաև նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:
3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խրախուսանքը քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել ծառայության ամբողջ ընթացքում՝ մեկ անգամ:

4. Սույն հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված խրախուսման միջոցները քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառում է քննչական կոմիտեի նախագահը, բացառությամբ սույն հոդվածի 5-7-րդ մասերով նախատեսված դեպքերի:
5. Եթե արտահերթ շնորհվող կոչումը կամ օրենքով նախատեսված կոչումի վերին սահմանից մեկ աստիճանով ավելի բարձր շնորհվող կոչումը բարձրագույն կոչում է, ապա սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ:
6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցները քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, եթե կարգապահական տույժը կիրառվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:
7. Սույն հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված խրախուսման միջոցները քննչական կոմիտեի նախագահի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:
8. Քննչական կոմիտեի գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերում պաշտոն զբաղեցնող ծառայողներին խրախուսման ներկայացնելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Հոդված 29. Քննչական կոմիտեի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Քննչական կոմիտեի ծառայողը կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել՝
1) իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելու դեպքում.
2) սույն օրենքով նախատեսված պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում.
3) սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության կանոնները խախտելու դեպքում:

Հոդված 30. Կարգապահական տույժերը

1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.
1) զգուշացում.
2) նկատողություն.
3) խիստ նկատողություն.
4) կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով.
5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.
6) լիազորությունների դադարեցում:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժերը քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառում է քննչական կոմիտեի նախագահը, բացառությամբ սույն հոդվածի 3-5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը բարձրագույն կոչում ունեցողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:
4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալների նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:
5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը քննչական կոմիտեի նախագահի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Հոդված 31. Քննչական կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ:
2. Եթե կարգապահական վարույթը հարուցվել է կարգապահական հանձնաժողովի անդամներից մեկի նկատմամբ, ապա նրա մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին կասեցվում է՝ մինչև համապատասխան որոշում ընդունելը:
3. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ:
4. Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան 12 ամիս հետո այն կատարելու օրվանից:
5. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 3 շաբաթը, բացառությամբ քննչական կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել քննչական կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով:
6. Եթե մինչև կարգապահական վարույթ հարուցելը կամ կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվել է, որ առկա է քննչական կոմիտեի տվյալ ծառայողի մասնակցությամբ կամ նրա կողմից կատարված ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթի հարուցումը հետաձգվում, իսկ հարուցված կարգապահական վարույթը կասեցվում է՝ մինչև համապատասխան նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության ավարտը:
7. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական տույժը նշանակվում է կարգապահական վարույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:
8. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական վարույթի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, քննչական կոմիտեի նախագահը հարցը ներկայացնում է կարգապահական հանձնաժողովի քննարկմանը:
9. Կարգապահական հանձնաժողովը կարգապահական խախտման հարցը քննելիս քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության հարցը, իսկ համապատասխան միջնորդության դեպքում՝ նաև տվյալ իրավիճակում

«լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարցը:
10. Կարգապահական տույժի մասին քննչական կոմիտեի ծառայողը իրազեկվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
11. Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե քննչական կոմիտեի նույն ծառայողը կատարել է մի քանի կարգապահական խախտում, քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:
12. Եթե քննչական կոմիտեի ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:
13. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարանում:
14. Կարգապահական տույժի ենթարկված քննչական կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

Հոդված 32. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցնելը

1. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցվում են՝
1) քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում՝ մինչև համապատասխան վերջնական որոշման ընդունումը.
2) քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում, եթե նրան վերագրվում է այնպիսի խախտում, որը՝ սույն օրենքի համաձայն, կարող է նրա լիազորությունների դադարեցման հիմք հանդիսանալ՝ մինչև տվյալ հիմքով հարուցված կարգապահական վարույթով վերջնական որոշման ընդունումը:
2. Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների լիազորությունները կասեցվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:
3. Քննչական կոմիտեի մյուս ծառայողների լիազորությունները կասեցվում են քննչական կոմիտեի նախագահի կողմից:
4. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:

Հոդված 33. Քննչական կոմիտեի ծառայողին ավելի ցածր պաշտոնի փոխադրելը

1. Քննչական կոմիտեի ծառայողին չի կարելի ավելի ցածր պաշտոնի փոխադրել, բացառությամբ հետևյալ դեպքերի.
1) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է քննչական կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա.
2) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է որպես կարգապահական տույժ.
3) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 14-րդ մասի 5-րդ կետով սահմանված որոշման հիման վրա:

Հոդված 34. Քննչական կոմիտեի ծառայողին գործուղելը

1. Քննչական կոմիտեի ծառայողը, առանց իր համաձայնության, իր զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու պայմանով կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել քննչական կոմիտեի կենտրոնական կամ տարածքային ստորաբաժանում այլ ծառայության՝ վերջինիս կազմում քննչական կոմիտեի ծառայողի ժամանակավոր բացակայության, ծանրաբեռնվածության կամ թափուր հաստիքների պատճառով:
2. Քննչական կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության փոխադրելը կատարվում է քննչական կոմիտեի նախագահի հրամանով: Քննչական կոմիտեի ծառայողի գրավոր համաձայնությամբ գործուղումը կարող է երկարաձգվել:
3. Քննչական կոմիտեի գործուղված ծառայողի աշխատավարձը չի կարող լինել ավելի պակաս, քան իր պաշտոնում ստացածը:
4. Քննչական կոմիտեի ծառայողը գործուղման ավարտից հետո՝ երկու տարվա ընթացքում, կրկին առանց իր համաձայնության չի կարող գործուղվել:

Հոդված 35. Քննչական կոմիտեի ծառայողի ատեստավորումը

1. Քննչական կոմիտեի ծառայողի ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին քննչական կոմիտեի ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:
2. Քննչական կոմիտեի ծառայողը երեք տարին մեկ անցնում է ատեստավորում:
3. Քննչական կոմիտեի ծառայողի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:
4. Քննչական կոմիտեի ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է քննչական կոմիտեի նախագահի հրամանի հիման վրա կամ քննչական կոմիտեի ծառայողի ցանկությամբ:
5. Ատեստավորումն անցկացվում է քննչական կոմիտեի ծառայողի անմիջական մասնակցությամբ:
6. Ատեստավորման ենթակա չեն՝
1) քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները.
2) քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների պետերը, Երևան քաղաքի քննչական վարչության պետը, մարզային քննչական վարչության պետերը.
3) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քննչական կոմիտեի ծառայողները, եթե նրանք ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:
7. Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քննչական կոմիտեի ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:
8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև քննչական կոմիտեի ժամանակավոր անաշխատունակ ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

9. Ատեստավորման ենթակա քննչական կոմիտեի ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:
10. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է քննչական կոմիտեի ծառայողի ծառայողական բնութագիրը:
11. Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ քննչական կոմիտեի ծառայողի մասին, նրա գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում քննչական կոմիտեի ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին տարին մեկ անգամ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:
12. Քննչական կոմիտեի ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր գնահատագրին:
13. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել քննչական կոմիտեի ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:
14. Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.
2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ ներառելով քննչական կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում.
3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով.
4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ կոչում շնորհելու մասին.
5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին.
6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:
15. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին և դրանց հետ համաձայն չլինելու դեպքում եռօրյա ժամկետում բողոքարկելու դրանք քննչական կոմիտեի նախագահին:
16. Որակավորման հանձնաժողովի եզրակացությունը հանձնաժողովի նախագահն ատեստավորման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է քննչական կոմիտեի նախագահին:
17. Քննչական կոմիտեի նախագահն ատեստավորման արդյունքների հիման վրա լրացուցիչ վերապատրաստում անցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ քննչական կոմիտեի ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու, ինչպես նաև վերապատրաստման ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշում է ընդունում նրա աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Արտահերթ կոչում շնորհելու, ավելի ցածր պաշտոնի փոխադրելու կամ պաշտոնից

ազատելու միջնորդությունների առկայության դեպքում քննչական կոմիտեի նախագահը կարող է համապատասխան որոշում ընդունել նույն ժամկետում:
18. Քննչական կոմիտեի ծառայողների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Հոդված 36. Քննչական կոմիտեի ծառայողի վերապատրաստումը

1. Քննչական կոմիտեի ծառայողները, բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան 2 տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում:
2. Վերապատրաստումն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 37. Քննչական կոմիտեի ծառայողի վարձատրությունը

1. Քննչական կոմիտեի ծառայողների վարձատրության, այդ թվում հիմնական և լրացուցիչ աշխատավարձի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 38. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի կենսաթոշակային ապահովությունը, պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու կամ զոհվելու դեպքում՝ քննչական կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունը իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով:

Հոդված 39. ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողները ենթակա են պարտադիր պետական ապահովագրության իրենց պարտականությունները կատարելու հաշմանդամ դառնալու (բացառությամբ՝ պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման

պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու), առողջությանը վնաս պատճառելու դեպքերից:
2. Ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, հաշվարկման, վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 40. Գույքային վնասի հատուցումը

1. Քննչական կոմիտեի ծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին պատճառված գույքային վնասը՝ պայմանավորված պարտականությունների կատարմամբ, հատուցում է պետությունը:
2. Վնասի հատուցման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հոդված 41. Քննչական կոմիտեի ծառայողի առողջական վիճակի հետազոտումը

1. Պետությունն ապահովում է քննչական կոմիտեի ծառայողի առողջական վիճակի անվճար հետազոտումն ու նրա բուժումը: Քննչական կոմիտեի ծառայողի առողջական վիճակի հետազոտումն ու բուժումը իրականացվում է ՀՀ ոստիկանության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում նշված բժշկական հաստատություններում:
2. Առողջական վիճակի հետազոտման պայմանները, պարբերականությունը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 42. ՀՀ քննչական կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելը

1. Անհրաժեշտության դեպքում, պայմանավորված քննչական կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության գործուղելու հետ, քննչական կոմիտեի ծառայողն ապահովվում է բնակելի տարածությամբ: Քննչական կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում տրվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

Հոդված 43. Քննչական կոմիտեի ծառայողի այլ սոցիալական երաշխիքները

Պետությունը քննչական կոմիտեի ծառայողի համար երաշխավորում է՝
1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.
2) ամենամյա վճարովի արձակուրդ.
3) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված վարձատրությունը.
4) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում.

5) մշտական բնակության վայրից դուրս գործուղվելիս օրենսդրությամբ սահմանած չափերով և կարգով գործուղման ծախսերի փոխհատուցում:

Հոդված 44. Քննչական կոմիտեի ծառայողի արձակուրդը

1. Քննչական կոմիտեի ծառայողներն ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ և լրացուցիչ արձակուրդի իրավունք, որի տևողությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
2. Քննչական կոմիտեի ծառայողի ամենամյա հերթական վճարովի արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտի քննչական կոմիտեի բնականոն գործունեության իրականացմանը:

Հոդված 45. Քննչական կոմիտեի խորհրդանիշը, ծառայողի համազգեստը, վկայականը և կնիքը

1. Քննչական կոմիտեի խորհրդանիշի ձևը և նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
2. Քննչական կոմիտեի ծառայողներին պետական բյուջեի միջոցների հաշվին տրվում է համազգեստ, իսկ զինվորական քննչական գլխավոր վարչության ծառայողներին՝ նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների կրման համար նախատեսված դաշտային (ամառային և ձմեռային) համազգեստ:
3. Քննչական կոմիտեի համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և կրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Քննչական կոմիտեի ծառայողներին տրվում են քննչական կոմիտեի նախագահի հաստատած միասնական նմուշի վկայականներ, ինչպես նաև նրանց անվամբ քննչական կոմիտեում գրանցված և համարակալված անձնական կնիքներ:

Հոդված 46. Քննչական կոմիտեի ծառայողի անվտանգությունը և անձնական պաշտպանության միջոցները

1. Քննչական կոմիտեի ծառայողն ունի ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Քննչական կոմիտեի ծառայողին ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:
2. Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է քննչական կոմիտեի նախագահի հրամանով:
3. Քննչական կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության հատուկ միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ծառայողական հաշվեցուցակային զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների գործադրման հիմքերի և կարգի նկատմամբ կիրառվում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են քննչական կոմիտեում ծառայողների նկատմամբ և չեն հակասում սույն օրենքին:
5. Քննչական կոմիտեի ծառայողը, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում քննչական կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ քննչական կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 7
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 47. Քննչական կոմիտեի ֆինանսավորումը

1. Քննչական կոմիտեի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:
2. Քննչական կոմիտեի բյուջետային հայտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվում և ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում այն պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողով և քննչական կոմիտեին է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումները:
3. Քննչական կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է քննչական կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով քննչական կոմիտեի ծառայողների և քննչական կոմիտեի դեպարտամենտում ծառայողների աշխատավարձի միասնական ֆոնդի երկու տոկոսին:
4. Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են քննչական կոմիտեի նախագահի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 8
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 48. Քննչական կոմիտեի ծառայողի վարձատրությունը անցումային փուլում

1. Մինչև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քննչական կոմիտեի ծառայողների համար սահմանված վարձատրության համակարգի գործելը, քննչական կոմիտեի

ծառայողների վարձատրությունը իրականացվում է սույն հոդվածով սահմանված կարգով:
2. Քննչական կոմիտեի ծառայողի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից, կոչումների հավելավճարներից և օրենքով նախատեսված այլ վճարներից:
3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափը հավասար է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնային դրույքաչափին:
4. Բարձրագույն պաշտոնի 2-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 90.52 %-ը:
5. Բարձրագույն պաշտոնի 3-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 80.79%-ը:
6. Գլխավոր պաշտոնի 1-ին ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 75.99%-ը:
7. Գլխավոր պաշտոնի 2-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 71.19%-ը:
8. Գլխավոր պաշտոնի 3-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 66.39%-ը:
9. Առաջատար պաշտոնի 1-ին ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 61.59%-ը:
10. Առաջատար պաշտոնի 2-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 56.79%-ը:
11. Առաջատար պաշտոնի 3-րդ ենթախմբի պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 51.99%-ը:
12. Կրտսեր պաշտոնի պաշտոնային դրույքաչափը կազմում է քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափի 47.18%-ը:
13. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնային դրույքաչափից ելնելով՝ կոչումների համար սահմանվում են հետևյալ չափերով հավելավճարներ.
1) արդարադատության գեներալ-լեյտենանտ՝ 80 տոկոսով.
2) արդարադատության գեներալ-մայոր՝ 75 տոկոսով.
3) արդարադատության գնդապետ՝ 65 տոկոսով.
4) արդարադատության փոխգնդապետ՝ 60 տոկոսով.
5) արդարադատության մայոր՝ 55 տոկոսով.
6) արդարադատության կապիտան՝ 50 տոկոսով.
7) արդարադատության ավագ լեյտենանտ՝ 45 տոկոսով.
8) արդարադատության լեյտենանտ՝ 40 տոկոսով:
14. Կոչում ունեցող քննչական կոմիտեի ծառայողն ստանում է հավելավճար՝ դատախազի, դատավորի, քննիչի և հետաքննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ իրենց շնորհված կոչման նկատմամբ սահմանված հավելավճարի առավելագույն չափի 4-ական տոկոսի չափով: Բոլոր դեպքերում կոչման համար տրվող հավելավճարը չի կարող գերազանցել տվյալ ծառայողի պաշտոնային դրույքաչափը:
15. Քննչական կոմիտեի ծառայության պաշտոնի նշանակված դատավորների, դատախազների, քննիչների կամ հետաքննիչների նախկին ծառայության կամ աշխատանքի ժամկետը հաշվի է առնվում նրանց աշխատավարձը հաշվարկելիս:

Հոդված 49. Ծառայության ստաժը հաշվարկելը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչներին և հետաքննիչներին քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում նշանակելիս՝ ՀՀ ոստիկանությունում և ՀՀ պաշտպանության նախարարությունում նրանց ունեցած ծառայության ստաժը հաշվարկվում է քննչական կոմիտեում ծառայության ստաժի մեջ:

Հոդված 50. Նախկինում շնորհված կոչումները (դասային աստիճանները), կիրառված կարգապահական տույժերը

1. Քննչական կոմիտեում ծառայության անցնելու կապակցությամբ քննչական կոմիտեի ծառայողներին նախկինում շնորհված կոչումները (դասային աստիճանները) պահպանվում են անկախ քննչական կոմիտեում զբաղեցրած պաշտոնից և համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված կոչումներին:
2. Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակվելիս տվյալ պաշտոնի համար սահմանված վերին սահմանից ավելի բարձր կոչում (դասային աստիճան) ունեցող անձանց սույն օրենքով համապատասխանեցված կոչումները պահպանվում են:
3. Սույն օրենքով սահմանված կարգով կոչումներ շնորհելիս նախկինում շնորհված կոչումով (դասային աստիճանով) ծառայության ժամկետը հաշվի է առնվում:
4. Քննչական կոմիտեի ծառայողների նկատմամբ մինչև սույն օրենքն ուժի մետ մտնելը կիրառված կարգապահական տույժերը պահպանվում են: Սույն օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված ժամկետը հաշվվում է մինչև սույն օրենքն ուժի մետ մտնելը կիրառված կարգապահական տույժի նշանակման օրվանից:
5. Սույն օրենքի ընդունումը չի կարող հանգեցնել ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող ծառայողի դրամական բավարարման կամ աշխատավարձի չափի նվազեցման:

Հոդված 51. Քննչական կոմիտեի կառուցվածքի հաստատումը եվ ծառայողների նշանակման կարգը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության Նախագահը 20-օրյա ժամկետում նշանակում է քննչական կոմիտեի նախագահ:
2. Քննչական կոմիտեի նախագահը՝
1) պաշտոնի նշանակվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, ՀՀ կառավարությունում քննարկման ներկայացնելու նպատակով ՀՀ վարչապետին է ներկայացնում քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը, ինչպես նաև քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը,
2) քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը հաստատվելուց հետո՝
ա) 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ նշանակման նպատակով ներկայացնում է իր տեղակալների թեկնածությունները,

բ) մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում քննչական ծառայության մյուս պաշտոններում:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության և պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմինների քննիչները քննչական կոմիտեի նախագահի կողմից նշանակվում են քննչական կոմիտեում պաշտոնի՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Պաշտոնի նշանակելիս պահպանվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տվյալ ծառայողի զբաղեցրած պաշտոնի խումբն ու ենթախումբը:
4. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված նշանակումները կատարելուց հետո քննչական կոմիտեում թափուր պաշտոններում նշանակումները կատարվում են քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մինչև սույն օրենքով սահմանված կարգով քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի կազմումը:

Հոդված 52. Քննչական կոմիտեի ծառայողների առաջին ատեստավորումը

1. Քննչական կոմիտեի ծառայողների առաջին ատեստավորումը անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց տասնութ ամիս հետո:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետային պարբերականությամբ, երեք փուլով, յուրաքանչյուր փուլում, առաջին ատեստավորում են անցնում քննչական կոմիտեի ծառայողների մեկ երրորդը:

Հոդված 53. Քննչական կոմիտեի որակավորման եւ կարգապահական հանձնաժողովները

1. Քննչական կոմիտեի որակավորման և կարգապահական հանձնաժողովները կազմավորվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց երեք ամիս հետո:

Հոդված 54. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների եւ առաջխաղացման ցուցակների կազմումը

1. Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների և առաջխաղացման ցուցակների կազմման և դրանցում ընդգրկման սույն օրենքով սահմանված կարգը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի կողմից առաջին շրջանավարտները տալուց հետո՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 55. Քրեական վարույթները փոխանցելը

1. Մինչեւ քննչական կոմիտեի ծառայող նշանակվելը ոստիկանության և պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչները շարունակում են նյութեր նախապատրաստել և իրենց վարույթում եղած քրեական գործերով նախաքննություն իրականացնել՝ հանդես գալով համապատասխանաբար որպես ոստիկանության կամ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչներ:
2. Քննչական կոմիտեում որպես քննիչ նշանակվելու պահից ոստիկանության և պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի նախկին քննիչները

շարունակում են իրենց վարույթներում եղած նյութերի նախապատրաստումը և քրեական գործերով նախաքննության իրականացումը, եթե քննչական կոմիտեում իրենց զբաղեցրած պաշտոնում այդպիսի լիազորություն իրենց վերապահված է: Հակառակ դեպքում քննչական կոմիտեում նշանակվելու պահից նրանք նախապատրաստվող նյութերը և վարույթները հանձնում են ըստ քննչական ենթակայության:

Հոդված 56. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում առկա քրեական գործերի արխիվը հանձնվում է քննչական կոմիտեի պահպանությանը:
3. Սույն օրենքի 38-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատված ծառայողին նշանակվում է կենսաթոշակ, եթե նա քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում է նշանակվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն և քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ:

Սույն մասով սահմանված ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են զինվորական ծառայության ժամանակահատվածը և քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվելու ամսվան նախորդող ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում ստացած դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի ծառայության ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 2 տոկոսը, իսկ մինչեւ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնելը աշխատած և ծառայության ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը:

Սույն մասով կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը: Սույն մասով սահմանված դրամական բավարարման չափը որոշվում է պաշտոնային դրույքաչափի, զինվորական կոչման դրույքաչափի, զինվորական ծառայության ստաժի համար տրվող հավելման գումարի և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով: Կենսաթոշակը նշանակելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակը վճարվում է, կենսաթոշակ վճարելը դադարեցվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	
1	2	3	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան	«ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ նախագծի 57-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «5. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողը, ով 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում առնվազը 10 տարի պաշտոն է զբաղեցրել՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք ունի:»:	Չեն ընդունվել	1. Ա քանի մասի ծառա նշան վերտ ամրա կենս նախ մարմ զինվ նաև՝ կարգ առնվ զինվ սահմ
է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինվորական կենսաթոշակների համար սահմանված կարգով:	«ՀՀ քննչական կոմիտեի ռեգլամենտում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի 33-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «1. Քննչական կոմիտեի ռեգլամենտում պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր	զինվորական կենսաթոշակների	կապ գործ կապ լրաց ծառա դրութ տարբ զինվ կազմ տարի Հետև բնագ Հայաս

ԿԱՄՈՒԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՌԵԳԼԱՄԵՆՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	ոստիկանության քննչական մարմիններում առնվազը 10 տարի պաշտոն է զբաղեցրել՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք ունի:»: Առաջարկությունների ներկայացումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի սոցիալական իրավունքների ապահովման, ինչպես նաև ՀՀ-ում աշխատանքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նվազագույն տասը տարվա ամրագրված դրույթը, որպես սկզբունք իրացնելու հրամայականով:		կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում առնվազն 10 տարի պաշտոն զբաղեցրած անձանց «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք վերապահելը համահունչ չէ վերոնշյալ նորմի պահանջներին և ընդհանուր համակարգից դուրս է: Միաժամանակ նկատենք, որ ներկայացված նախագծերի համապատասխան հոդվածներով ամրագրված կարգավորումները հենց նպատակ են հետապնդում ապահովել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի սոցիալական իրավունքների կենսագործումը: Ինչ վերաբերում է աշխատանքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նվազագույն տասը տարվա ամրագրված դրույթը որպես սկզբունք իրացնելուն, ապա ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով հստակորեն տարանջատված են ՀՀ-ում նշանակվող կենսաթոշակների տեսակները, այն է՝ աշխատանքային և զինվորական: Իսկ կենսաթոշակների տեսակներին վերաբերող հոդվածների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային

			ստաժի առկայություն նախատեսող դրույթը որևէ առնչություն չունի զինվորական կենսաթոշակի նշանակման հետ:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	**«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ** 1. Առաջարկում ենք Նախագծի 52-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր նախադասությամբ. «Պաշտոնի նշանակվելիս շարունակվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ ծառայողի ունեցած մասնագիտական ստաժի տևողությունը:»: Հիմնավորում: Հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմինների քննիչները քննչական կոմիտեում պաշտոնի նշանակվելուց հետո, նրանց նախկինում ունեցած ստաժը շարունակվում է և հաշվի է առնվում կենսաթոշակի անցնելու ժամանակ: 2. Նախագծի 44-րդ հոդվածը լրացնել 6-11-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ. «6) ծառայողների կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու կարգը և պայմանները, ինչպես նաև դրանցով պայմանավորված ծախսերի հատուցման	1. Ընդունելի է 2. Չեն ընդունվել	1. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջարկվող հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Նախագծի 49-րդ հոդվածով: 2.Առաջարկությունները չեն ընդունվել, քանի որ դրանք չեն բխում ՀՀ օրենսդրության ընդհանուր կարգավորումներից: Մասնավորապես, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ հանրային

	կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը. 7) ծառայողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ: Այն ծառայողների համար, ովքեր ծառայողական պարտականությունները կատարում են առողջության համար վնասակար պայմաններում, սահմանվում է աշխատաժամանակի կրճատ տևողություն. 8) ծառայողը կարող է ներգրավվել արտաժամյա ծառայության՝ ա) պետության անվտանգության ապահովման համար. բ) պետության պաշտպանության անհրաժեշտության դեպքում. գ) ծառայողական առաջադրանքների կատարման համար, որոնք, իրենց առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող կասեցվել կամ դադարեցվել. դ) ծառայողներին օրական 8 ժամից ավելի արտաժամյա ծառայության ներգրավել չի թույլատրվում. ե) ծառայողի արտաժամյա ծառայության տևողությունը տարվա ընթացքում չպետք է գերազանցի 300 ժամը: Արտաժամյա ծառայության համար վճարվում է հավելավճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով. զ) արտաժամյա ծառայության ժամանակի հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի		ծառայողների համար լրացուցիչ սոցիալական երաշխիքներ նախատեսող դրույթներով համակարգային առումով էական տարբերակումներ ամրագրված չեն: Հետևաբար, պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է առաջարկվում ընդհանուր մոտեցումից դուրս արտոնություններ սահմանող դրույթներ ամրագրել ստեղծվելիք քննչական կոմիտեի ծառայողների համար: Միաժամանակ ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ ներկայումս «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով համապատասխան արտոնություններ հատուկ քննչական ծառայության ծառայողների համար նույնպես սահմանված չեն:

	Հանրապետության կառավարությունը. 9) սույն օրենքով նախատեսված դեպքերում ծառայողը կարող է ծառայության ներգրավվել հանգստյան և տոն օրերին: Հանգստյան և տոն օրերի ծառայության համար վճարվում է հավելավճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով. 10) առողջության, տարիքի, ժամկետը լրանալու, հաստիքների կամ քննչական կոմիտեի թվակազմի կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու, ինչպես նաև երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում ծառայողներին տրվում է դրամական օգնություն՝ մինչև 10 տարի ծառայած ծառայողներին՝ աշխատավարձի հնգապատիկի չափով. 10-ից 15 տարի ծառայած ծառայողներին՝ աշխատավարձի քսանապատիկի չափով: Դրամական օգնություն չի տրվում դիտավորյալ հանցագործության համար դատապարտված կամ կարգապահական խախտում թույլ տալու համար ծառայությունից արձակված (ազատված) ծառայողներին: Դատապարտված անձանց նկատմամբ հետագայում արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում դրամական օգնությունը ենթակա է վճարման, ընդ որում, դրամական օգնության չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում ծառայողին աշխատանքից ազատելու պահը:		

	Ծառայության ժամկետը լրանալու պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), դրամական օգնությունը ստացած և ժամկետը լրանալու կապակցությամբ դրամական օգնությունը վճարելիս կիրառվում են սույն հոդվածով սահմանված ժամկետները և չափերը: Հերթական անգամ վճարվող և նախկինում վճարված դրամական օգնությունների բազմապատիկների հանրագումարը չի կարող ծառայության ընդհանուր ստաժի տվյալ խմբի համար սահմանված աշխատավարձից ավելի լինել: Դրամական օգնության վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը. 11) ծառայողներին և (կամ) նրանց ընտանիքի անմիջական անդամներին առողջապահության ծառայությունների, հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման, ուսման վճարի, Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանգստի ապահովման նպատակով տրամադրվում է սոցիալական փաթեթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:»:		
	3. Նախագծի 57-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ պաշտպանության բնագավառի պետական	3. Չի ընդունվել	3. Առաջարկությունը չի ընդունվել, քանի

	լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում պաշտոնավարման ընթացքում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած և սույն օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով քննչական կոմիտեում պաշտոնի նշանակված ծառայողի կողմից, մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո, կենսաթոշակի անցնելու դիմում ներկայացվելու դեպքում նրան կենսաթոշակ նշանակվում է «Պետական կենսաթոշակների մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով և չափով:»: **«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»**		որ պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է ներկայացվել առաջարկությունը: Բացի այդ, գտնում ենք, որ ներկայացված նախագծով բավարար ծավալի սոցիալական երաշխիքներ արդեն իսկ նախատեսված են ստեղծվելիք քննչական կոմիտեի ծառայողների համար:

	ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 4. Նախագծի 5-րդ հոդվածից հետո լրացնել նոր 6-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածում ավելացնել «քննչական կոմիտեում ծառայողների» բառերը:»:	4. Չի ընդունվել	4. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Պետական պաշտոններ զբաղենցող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը վերաբերում է զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայողներին տրվող դրամական օգնությանը և սոցիալական այլ երաշխիքներին, մինչդեռ, քննչական կոմիտեի ծառայողները զինծառայողներ կամ զինծառայողներին հավասարեցված պետական ծառայողներ չեն լինելու: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առկա իրավակարգավորման շրջանակներում հատուկ քննչական ծառայությունում ծառայողները նույնպես ընդգրկված չեն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն լրացուցիչ դրամական բավարարում ստանալու իրավունք ունեցող պետական ծառայողների ցուցակում:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Դավիթ Հարությունյան, Գագիկ Ձհանգիրյան	«ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, հանել «քննչական կոմիտեի նախագահին առընթեր հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները» բառեր՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում: Նախագծի 46-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել՝ քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը, կրելու կարգը, ինչպես նաև կոմիտեի խորհրդանիշը սահմանելու իրավասությունը վերապահելով Հայաստանի Հանրապետության կառավարությունը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	1.. «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածը խմբագրել՝ նախատեսելով, որ զինվորական քննչական գլխավոր վարչության պետն ի պաշտոն է քննչական կոմիտեի նախագահի տեղակալն է՝ դրանից բխող համապատասխան փոփոխություններ կատարելով Նախագծի մյուս հոդվածներում: Միաժամանակ անհրաժեշտ է զինվորական քննչական գլխավոր վարչությունը ներառել Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	կազմում: 2. Նախագծի 12 - րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «ծառայողների» բառը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյան	ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը խմբագրել՝ քննչական կոմիտեի և քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը հաստատելու իրավասությունը վերապահելով ՀՀ կառավարությանը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:
ՀՀ կառավարություն	1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում լրացնել օրենքի համարը: 2. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող 15.1-րդ հոդվածի 2-րդ մասում «դատախազի կամ քննիչի» բառերից առաջ լրացնել	Ընդունվել են	Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

	«քննչական կոմիտեի ծառայողի,» բառերը, իսկ 3-րդ մասում «դասային աստիճանի» բառերը փոխարինել «կոչման» բառերով: 3. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «հարկային և մաքսային» բառերից հետո լրացնել «քննչական կոմիտեի» բառերը, իսկ «հավելավճարը» բառից առաջ լրացնել «հարկային և մաքսային ծառայողներին» բառերը: 4. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում լրացնել օրենքի ընդունման օրն ու համարը, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածին կատարվող հղման փոխարեն հղում		

	կատարել օրենքի 22-րդ հոդվածին, իսկ 5-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել: 5. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա երբ սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվել է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կամ դատախազի, հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ է նշանակվել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով: Սույն մասով սահմանված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակելուց հետո անցնել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի,		

	հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնում:»: 6. «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածում «դիմումները (հաղորդումները)» բառերից հետո լրացնել «բողոքները» բառը: 7. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «մեթոդական ցուցում» բառերը փոխարինել «ուղեցույցներ» բառով, իսկ նույն հոդվածի 7-րդ ամսում «հանձնաժողովներ» բառը փոխարինել «մարմիններ» բառով: 8. Նախագծի 15-րդ հոդվածը հանել: 9. Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել այնպես, որ երկուական իրավաբան-գիտնականների փոխարեն կարգապահական հանձնաժողովի կազմում ընգրկվեն Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից և ՀՀ կառավարության աշխատակազմից նշանակված երկուական		

	ներկայացուցիչ: 10. Նախագծի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «***Հոդված 14. Ծառայողական և քրեադատավարական վերադասությունը*** 1. Քննչական կոմիտեի նախագահը վերադաս է քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար: 2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը վերադաս է իր համակարգման ներքո գտնվող քննչական կոմիտեի բոլոր ծառայողների համար: 3. Քննչական կոմիտեի ստորաբաժանման պետը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր ծառայողների համար 4. Քննչական կոմիտեում ծառայողական վերադասության մյուս հարաբերությունները կարգավորվում են քննչական կոմիտեի կանոնակարգով: 5. Քննչական կոմիտեում քրեադատավարական վերադասության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:»: 11. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասում «բակալավրի» բառից հետո լրացնել «,		

	մագիստրոսի» բառը: 12. Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասում «լրացուցիչ» բառից հետո լրացնել «որակավորման» բառը, իսկ 11-րդ մասում «ենթակա են դատական կարգով բողոքարկման» բառերը փոխարինել «կարող են բողոքարկվել վարչական դատարան՝» բառերով: 13. Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասում «ներկայացմամբ» բառից հետո լրացնել «վեց տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ պաշտոնավարման սահմանային տարիքը լրանալը:» բառերը: Նույն հոդվածում լրացնել նոր մասեր՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում: 3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից:»: Համապատասխան կարգավորումներ սահմանել նաև հատուկ քննչական ծառայության պետի նշանակման և պաշտոնավարման համար:		

	14. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «անձնական նախաձեռնությամբ՝» բառերը: 15. Հստակեցնել Նախագծի 24-րդ հոդվածով քննչական կոմիտեի ծառայողների պաշտոններին համապատասխանող կոչումների ստորին սահմանները: 16. Նախագծի 26-րդ և 27-րդ հոդվածների վերնագրերում «ծառայողի» բառից հետո լրացնել «ծառայողական» բառը: 17. Նախագծի 28-րդ հոդվածով հստակեցնել, թե ովքեր են խրախուսման միջոցներ կիրառող պաշտոնատար անձինք: 18. Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասում «զանցանքի» բառը փոխարինել «խախտման» բառով, իսկ 4-րդ մասում «5-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը» բառերը փոխարինել «6-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը» բառերով:		

	19. Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հանել, իսկ 3-րդ կետում «նրան պաշտոնից ազատելու համար» բառերը փոխարինել «նրա լիազորությունների դադարեցման» բառերով: 20. Նախագծի 34-րդ հոդվածի 1-ին մասում «տեղերի» բառը փոխարինել «հաստիքների» բառով: 21. Նախագծի 36-րդ հոդվածով սահմանված քննչական կոմիտեի պարտադիր վերապատրաստման ժամկետը վերանայել: 22. Նախագծի 41-րդ հոդվածի 1-ին մասում «ՀՀ ոստիկանության» բառերից հետո լրացնել «և ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում նշված» բառերը: 23. Նախագծի 45-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 45. Քննչական կոմիտեի խորհրդանիշը, ծառայողի համազգեստը, վկայականը և կնիքը** 1. Քննչական կոմիտեի խորհրդանիշի ձևը և		

	նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 2. Քննչական կոմիտեի ծառայողներին պետական բյուջեի միջոցների հաշվին տրվում է համազգեստ, իսկ զինվորական քննչական գլխավոր վարչության ծառայողներին՝ նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների կրման համար նախատեսված դաշտային (ամառային և ձմեռային) համազգեստ: 3. Քննչական կոմիտեի համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և կրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 4. Քննչական կոմիտեի ծառայողներին տրվում են քննչական կոմիտեի նախագահի հաստատած միասնական նմուշի վկայականներ, ինչպես նաև նրանց անվամբ քննչական կոմիտեում գրանցված և համարակալված անձնական կնիքներ:»: 24. Նախագծի 48-րդ հոդվածի 13-րդ մասում «պետի» բառը փոխարինել «նախագահի» բառով, իսկ 14-րդ մասում «պաշտոնային դրուքաչափը» բառերից առաջ լրացնել «տվյալ ծառայողի» բառերը: 25. Փոփոխել Նախագծի 51-րդ հոդվածում		

	քննչական կոմիտեի կառուցվածքի, անվանացանկի և հաստիքացուցակի հաստատման և քննչական կոմիտեի ծառայողներին պաշտոնի նշանակման կարգն ու ժամկետները: 26. Նախագծի 56-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնից ազատված ծառայողին նշանակվում է կենսաթոշակ, եթե նա քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում է նշանակվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն և քննչական կոմիտեի		

	ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ: Սույն մասով սահմանված ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են զինվորական ծառայության ժամանակահատվածը և քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվելու ամսվան նախորդող ամսվա համար պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական մարմիններում ստացած դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի ծառայության ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է դրամական բավարարման և սննդի		

	փոխհատուցման գումարի 2 տոկոսը, իսկ մինչեւ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնելը աշխատած և ծառայության ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը: Սույն մասով սահմանված դրամական բավարարման չափը որոշվում է պաշտոնային դրույքաչափի, զինվորական կոչման դրույքաչափի, զինվորական ծառայության ստաժի համար տրվող հավելման գումարի և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով: Կենսաթոշակը նշանակելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սույն մասով սահմանված կենսաթոշակը վճարվում է, կենսաթոշակ վճարելը դադարեցվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին»		

	Հայաստանի Հանրապետության օրենքով զինվորական կենսաթոշակների համար սահմանված կարգով:»: Նույն հոդվածի 5-րդ մասը հանել: 27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացնել 193.1-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 193.1 Քրեադատավարական վերադասությունը նախաքննության մարմնում** 1. Քննչական բաժնի պետը իրեն անմիջականորեն ենթակա քննիչի անմիջական վերադասն է: 2. Նախաքննության մարմնի ղեկավարի տեղակալի անմիջական վերադասը նախաքննության տվյալ մարմնի ղեկավարն է: 3. Նախաքննության մարմնի որևէ ստորաբաժանման կազմում չգտնվող ստորաբաժանման պետի անմիջական վերադասը նախաքննության մարմնի ղեկավարն է կամ նրա այն տեղակալը, ում համակարգման ներքո գտնվում է տվյալ ստորաբաժանումը.		

	4. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի տեղակալի անմիջական վերադասը տվյալ ստորաբաժանման պետն է: 5. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի որևէ տեղակալի համակարգման ներքո չգտնվող ենթաստորաբաժանման պետի անմիջական վերադասը տվյալ ստորաբաժանման պետն է: 6. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի տեղակալի համակարգման ներքո գտնվող ենթաստորաբաժանման պետի անմիջական վերադասը ստորաբաժանման պետի տվյալ տեղակալն է: 7. Նախաքննության մարմնի՝ ենթաստորաբաժանում չունեցող ստորաբաժանման պետի տեղակալի համակարգման ներքո գտնվող քննիչների անմիջական վերադասը տվյալ տեղակալն է, իսկ այդ ստորաբաժանման մյուս քննիչների անմիջական վերադասը՝ տվյալ ստորաբաժանման պետն է:		

	8. Նախաքննության մարմնի ղեկավարին կամ դրա որևէ ստորաբաժանման պետին առընթեր քննիչների անմիջական վերադասը նախաքննության տվյալ մարմնի ղեկավարն է կամ դրա համապատասխան ստորաբաժանման պետը: 9. Քննիչը տվյալ վարույթի շրջանակներում ունի մեկ անմիջական վերադաս:»: 28. «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» բառերը հանել, իսկ «Հանրապետության Նախագահին» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը:»: 29. Նախագծի 7-րդ հովածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 7.** Օրենքի 13-րդ, 14-րդ և 15-րդ		

	հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 13. Հատուկ քննչական ծառայության ծառայողների կոչումները** 1. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին շնորհվում են հետևյալ կոչումները. 1) արդարադատության գեներալ-լեյտենանտ. 2) արդարադատության գեներալ-մայոր. 3) արդարադատության գնդապետ. 4) արդարադատության փոխգնդապետ. 5) արդարադատության մայոր. 6) արդարադատության կապիտան. 7) արդարադատության ավագ լեյտենանտ. 8) արդարադատության լեյտենանտ: 2. Արդարադատության գեներալ-լեյտենանտի, արդարադատության գեներալ-մայորի կոչումները բարձրագույն կոչումներ են, որոնք շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: 3. Հատուկ քննչական ծառայության մյուս կոչումները շնորհում է հատուկ քննչական		

	ծառայության պետը: 4. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին կոչումները շնորհվում են հերթականության կարգով՝ նախորդ կոչումում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: 5. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին կոչումները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ: **Հոդված 14. Հատուկ քննչական ծառայության պաշտոններին համապատասխանող կոչումները** 1. Հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-լեյտենանտի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումը: 2. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալի պաշտոնին համապատասխանող		

	կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանն արդարադատության գնդապետի կոչումը: 3. Հատուկ քննչական ծառայության գլխավոր պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գնդապետի կոչումն է: 4. Հատուկ քննչական ծառայության առաջատար պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է: 5. Այլ պետական մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց հատուկ քննչական ծառայության պաշտոնի նշանակելիս երեք ամսվա ընթացքում շնորհվում է զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճան,		

	որակավորման դաս) համապատասխան կոչում: 6. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: **Հոդված 15. Կոչումների շնորհման ժամկետները** 1. Արդարադատության լեյտենանտի կոչումը սկզբնական կոչում է և շնորհվում է հատուկ քննչական ծառայության պաշտոնի նշանակվելուց: 2. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումի շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները. 1) արդարադատության լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 2 տարի.		

	2) արդարադատության ավագ լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 3 տարի. 3) արդարադատության կապիտանի կոչում ունեցողի համար՝ 3 տարի. 4) արդարադատության մայորի կոչում ունեցողի համար՝ 4 տարի. 5) արդարադատության փոխգնդապետի կոչում ունեցողի համար՝ 5 տարի: 3. արդարադատության գնդապետի կոչում ունեցող ծառայողին բարձրագույն կոչում շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում: 4. Նախորդ կոչումը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ կոչումը շնորհելու մասին իրավական ակտը ստորագրելու հաջորդ օրվանից: 5. Հատուկ քննչական ծառայության ծառայողի հերթական դասային աստիճանի շնորհումը		

	հետաձգվում է, երբ՝ 1) ատեստավորումից հետո նրա նկատմամբ որոշում է ընդունվել ատեստավորումը հետաձգելու և վերապատրաստման գործուղելու մասին. 2) նա ունի կարգապահական տույժ. 3) նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, կամ կատարվում է ծառայողական քննություն: 6. Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում հատուկ քննչական ծառայության ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:»: 30. Նախագծի 8-րդ հոդվածը հենել և լրացնել 10-րդ և 11-րդ հոդվածներ՝ հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 10.** Օրենքի 20-րդ հոդվածում՝		

	1) 1-ին մասը լրացնել նոր 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «6) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում:», 2) 5-րդ մասում «պետը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նախատեսված դեպքերի:» բառերը, 3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6. Եթե արտահերթ շնորհվող կոչումը կամ օրենքով նախատեսված կոչումի վերին սահմանից մեկ աստիճանով ավելի բարձր շնորհվող կոչումը բարձրագույն կոչում է, ապա սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հատուկ քննչական ծառայության պետի ներկայացմամբ:», 4) լրացնել նոր 7-րդ և 8-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված		

	խրախուսման միջոցները հատուկ քննչական ծառայության ծառայողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, եթե կարգապահական տույժը կիրառվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից: 8. Սույն հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված խրախուսման միջոցները հատուկ քննչական ծառայության պետի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:»: **Հոդված 11.** Օրենքի 21-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը. 1) զգուշացում. 2) նկատողություն.		

	3) խիստ նկատողություն. 4) կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով. 5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով. 6) ծառայությունից ազատում:», 2) 2-րդ մասում «պետը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերի:» բառերը:»: 31. Նախագծում լրացնել 16-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 16.** Օրենքի՝ 1) 1-ին հոդվածում, 16-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 18-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերում և 6-րդ մասում, 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում և 3-րդ մասում, 25-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «դասային աստիճան» բառերն իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «կոչում» բառերով և համապատասխան հոլովաձևերով, 2) 34-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին		

	նախադասությունը հանել:»: 32. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի 53-րդ հոդվածը հանել: 33. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2015թ. հունվարի 1-ը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսված կարգավորումները հնարավոր կլինի կենսագործել 2015 թվականից սկսած: 34. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-րդ մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական		

	գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները:»: 35. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ «մասում մարտի 31» բառերը փոխարինել «հունիսի 1» բառերով: 36. Փաթեթում ընդգրկել նոր նախագիծ՝ հետևյալ բովանդակությամբ. *ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ* **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**		

	Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1) փոխվել է հիմնական կենսաթոշակի չափը կամ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ տվյալ ամսվա 1-ից. 2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվել է սույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով՝ հաշվի առնելով վերջին զինծառայությունից արձակվելու օրվա դրությամբ զինծառայողի զինվորական ծառայության ստաժը, զինծառայողի անձնական գործակիցը, հիմնական կենսաթոշակի չափը և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու օրվանից:»: **Հոդված 2.** Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-		

	որդ կետում «կամ դատավորի» բառերը փոխարինել «, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի» բառերով: **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 7-ից:»:		